# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 մայիսի 2014 թվականի N 77-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (68-3.2-31) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2003թ. սեպտեմբերի 1-ի «Քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 71 «Ն» որոշմամբ հաստատված աշխատակարգի 9-րդ կետի, **ո ր ո շ ու մ եմ.**

1.Հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 68-3.2-31) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը.

| | |
|---|---|
| Բարսեղյան Կարեն | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ |
| Ասլանյան Սահակ | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ |
| Դավթյան Գայանե | Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Դավթյան Սուսաննա | Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |
| Կոստանդյան Նելլի | <<Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն |
| Տեր-Ստեփանյան Խորեն | <<Գեղիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն |

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Սահակ Ասլանյանին, մրցութային հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Բարսեղյանին:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*2014թ. մայիսի 6*
*ք. Կապան*